№ 163 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 1900 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 № 163

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաւատարմութեան պակասութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Վերին-Ագուլիսից. Նամակ Վաղարշապատից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքաց սուլթանի 25-ամեայ թագաւորութեան յօբելեանը. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Այսպէս էր խօսում Զրադաշտը։

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

—

Շիտակութեան և հաւատարմութեան բացակայութիւնը շատ վնասում է մեզ աւելի ընդարձակ և աւելի սերտ արդիւնագործական յարաբերութիւններ հաստատելու օտար երկիրների հետ։ Մենք ուզարկում ենք մեր արդիւնքների մի մասը արտասահման, բայց արտասահմանեան գնողը, մինչև որ չէ ստանում և չէ քննում ապրանքը, չը գիտէ թէ ինչ որակութեան է այն արդիւնքը, որ նա գնել է։ Շատ անգամ տեղ հասած ապրանքը նման չէ այն նմուշներին, որ նա տեսել է գնելու ժամանակ, նա աւելի ստոր տեսակի է, կամ խարդախված է էժանագին և ապարդիւն նիւթերով։

Մեր ներքին փոխանակութիւնը, գաւառներում տեղի ունեցող առևտրական գործողութիւնները ամեն օր բաց են անում խարդախութիւնների և կեղծիքների բազմաթիւ դէպքեր։ Յորենը, գարին և ուրիշ հացահատիկները մաքրված չեն լինում և կամ լինում են խառնված աւազի և հողի հետ, բուրդը և բամբակը թրջված են լինում ծանրութիւն առաջ բերելու համար, իւղը խարդախված է լինում ճարպերով և այլն։ Աղնիւ և շիտակ առևտրականի համար մի մեծ տանջանք է մաքրել և զտել իր ստացած նիւթերը և նրանցից կազմել բաւարար որակութեան ապրանք։

Անցեալ տարի մի քանի պարսիկ առևտրականներ գնել էին Նիժնի-Նովգորոդի տօնավաճառից զանազան ձոթեր և ամաններ։ Երբ Պարսկաստանում նրանք բաց արին ստացված հակերը, նկատեցին, որ ապրանքը ամենևին նման չէ իրանց տեսած նմուշներին, աւելի ստոր և էժանագին տեսակի է։ Նրանք գանգատվեցին ռուսաց հիւպատոսին, որ տեղնուտեղը գնեց ապրանքը և մերկացրեց խարդախութիւնը։ Արդիւնագործները, տեսնելով, որ խարդախութիւնը հաստատված է պաշտօնական մարմնի միջոցով, աշխատում են այժմ քնացնել գործը, բաւարարութիւն տալով պարսիկ վաճառականներին, միայն թէ հրապարակ չը դուրս գայ իրանց անունը արատաւորված կերպով։

Միթէ՞ այսպիսի հանգամանքներում կարելի է յուսալ, որ օտար երկրի հետ սկսված առևտրական յարաբերութիւնները կը զարգանան օրից օր և ընդարձակ ծաւալ կը ստանան։ Խարդախ գործողութիւնը ոչ միայն վնասակար և ամօթաբեր է որոշ դէպքում, այլ նա վնասակար է և ուրիշ դէպքերի համար, որովհետև փոխադարձ հաւատի պակասութիւնը արգելք կը հանդիսանայ սկսելու նոր ձեռնարկութիւններ։ Իսկ այնտեղ, ուր հաստատվել է հաւատարմութիւն, ուր կարելի է նմուշների հիման վրա տալ ապահով կերպով մեծ պատուէրներ, կարող է լայն ծաւալ ստանալ փոխանակութիւնը և զարգանալ առևտրական և արդիւնագործական շփումը։ Եւրոպական լուրջ արդիւնագործները վաղուց են իւրացրել այդ տեսակէտը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅՍՊԷՍ ԷՐ ԽՕՍՈՒՄ ԶՐԱԴԱՇՏԸ

—

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

—

Գթասիրտների մասին.

—

(Սովորական կարեկցութիւնը առաքինութիւն չէ, ըստ Նիցշէի, որովհետև գթացողը իր գթութեամբ վիրաւորանք է հասցնում այն մարդու ինքնասիրութեան, որին գթութեան արժանի է համարում).

«...Աղնիւը հրամայում է ինքն իրան չամաչցնել ուրիշներին»։

(Գթասիրտները ամօթխած չեն ուրիշների տանջանքի առաջ)։

Ամբոխի մասին.

—

(Նիցշէ ատում է ամբոխը, այսինքն նրանց, որոնք չունեն իրանց սեփական, ինքնուրոյն դաղափարները, ճաշակը, նպատակը եւ այլն։ Յայտնի քննադատ Բրանդէս բնորոշել է Նիցշէի աշխարհայեացքը իբրեւ արիստոկրատական բաղիկալիզմ, իբրեւ արժատական եւ միեւնոյն ժամանակ ազնւապետական ուղղութիւն, եւ Նիցշէ ճիշդ է գտել այդ բնորոշումը։—Այն չափով, որքան Նիցշէ քարոզում է, որ մարդ պէտք է ազնւանայ, ձգտի աւելի բարձր արարած դառնալ,—նրա քարոզը համակրելի է ի հարկէ, իսկ որքան նա ուզում է առաւելութիւն եւ արտօնութիւններ տալ այժմ այդ ձգտումն ունեցողներին՝ իբրեւ բարոյական արիստոկրատների, ազնւականների, այն չափով նրա քարոզը անհամակրելի է անշուշտ եւ ձեռնտու այն ինչինութիւններին, որոնք իրանց բարձրութիւնը եւ մեծութիւնը ուրիշներին արհամարհելումն են տեսնում)։

(Նիցշէ հրաւիրում է իր բարեկամներին այնտեղ, այն բարձունքը, ուր չէ կարող հասնել ամբոխը,—իշխող, գրող եւ զուարճացող ամբոխը)։

«...Ապագայի ծառի վրա ենք հիւսում մենք մեր բունը, թող արծիւները իրանց կտուցների մէջ կերակուր բերեն մեզ, միայնակներիս։

...Հզօր հողմերի նման կապրենք մենք նրանց (ամբոխին պատկանողների) գլխավերեւում. մենք հարեւան ենք արծիւներին, հարեւան ձիւնին, հարեւան արեւին,—այդպէս են ապրում հզօր հողմերը...»

Մորմերի մասին.

—

(Նիցշէ դէմ է հաւասարութիւն քարոզողներին։ Անիշխանականները, որոնք Նիցշէի նման, դէմ են պետական կազմակերպութեան եւ ծայրայեղ պաշտպան՝ անհատական ազատութեան, սկզբում իրանց համախոհ էին կարծում Նիցշէին։ Նոյն կարծիքն ունէին եւ նրանց հակառակորդները։ Նիցշէ հրաժարվելով հրաժարվում է բոլոր հաւասարականներից եւ առանձնապէս անիշխանականներից, որոնց մորմ (թունաւոր սարդ) է անուանում)։

«...Այսպէս եմ ասում ձեզ խորհրդանիշով (սիմվոլով), դուք, հաւասարութիւն քարոզողներ, որ դող էք ազդում մարդկանց։ Ըստ իս, դուք մորմեր էք եւ գաղտնի վրէժխնդիրներ։

...Դուք, հաւասարութիւն քարոզողներ։ Բրոնակալի անզօր անմտութիւնն է գոռում ձեր մէջ «հաւասարութեան» մասին...

Վիրաւորված ինքնասիրութիւն, թագցրած նախանձ, թերեւս դեռ ձեր հայրերի ինքնասիրութիւնն ու նախանձը,—ահա ինչն է բռնկում ձեր մէջ իբր անմիտ բոց վրէժխնդրութեան։

...Նրանք (հաւասարականները) նման են ոգեւորվածների,—բայց սիրտը չէ որ ոգեւորում է նրանց, այլ ոխը...

...Բայց ես խորհուրդ եմ տալիս ձեզ, բարեկամներ,—մի հաւատաք նրանց, որոնց մէջ շատ սաստիկ է պատժելու ձգտումը։

(Նրանք դահիճ են եւ խուզարկու։ Նիցշէ չէ ուզում, որ իրան չփոթեն նրանց հետ)։

«Որովհետեւ, իմ կարծիքով, արդարութիւնն ասում է՝ «մարդիկ հաւասար չեն»։

Եւ նրանք չը պէտք է հաւասար լինեն։

Թող հազարաւոր կամուրջներով եւ շաւիղներով դիմեն նրանք դէպի ապագան. թող աւելի եւ աւելի սաստկանայ նրանց մէջ թշնամութիւնն ու անհաւասարութիւնը,—այդպէս է ստիպում ինձ ասել իմ մեծ սէրը...

Կռիւ եւ անհաւասարութիւն կայ նոյն իսկ գեղեցկութեան մէջ...

Ինչպէս ասուածօրէն բեկբեկվում են այստեղ (գոթական տաճարում), կռուելով իրար հետ, կամարներն ու թաղերը,—ինչպէս լոյսի եւ խաւարի հետ միասին աքանչելի կերպով վեր են ձգտում նրանք մէկ մէկի հանդէպ։

Թող այդպէս ինքնավստահ եւ գեղեցիկ լինեն մեզ համար, բարեկամներ, մեր թշնամիները։ Աքանչելի կերպով ենք ուզում մենք ձգտել դէպի վեր մէկ մէկի հանդէպ»։

Յայտնի իմաստունների մասին

—

...Ազատ լինել ստրուկների երջանկութիւնից, ազատ՝ երկրպագութիւնից, անվեհեր եւ ահեղ, մեծ եւ միայնակ,—ահա նրանց ցանկութիւնը, որոնք չիտակ են։

...Գրասներ են (յայտնի իմաստունները)։

Միշտ էշի նման քաշում են նրանք ժողովրդի սայլը (նրանք իրանք նոյն ժողովուրդն են, նոյն ամբոխը, որ չը գիտէ, թէ ինչ է ոգին)։

...Դուք կանգնած էք իմ առաջ, յարդված, հպարտ, ուղղաձիգ մէջքերով, դուք, յայտնի իմաստուններ։ Ձեզ չէ շարժում ոչ սաստիկ հողմ, ոչ ցանկութիւն։

Տեսել էք դուք երբէք ծովի երեսին առագաստ, ուռած հողմից եւ ծփուն փոթորկից։

Առագաստի նման, դողալով փոթորկից ոգուց, անցնում է ծովի վրայով իմ իմաստութիւնը,—իմ վայրի իմաստութիւնը»։

Այսպէս էր խօսում Զրադաշտը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

„Арекназанъ или Заколдованный міръ“, сказка, сочин. Г. Агаянца. Пер. съ арм. Р. М. Амировъ. 61 стр. ц. 20 к. Баку 1900.

Վերջին տարիներս մի տեսակ ժոդա է դարձել հայերէնից ռուսերէն թարգմանել։ Թարգմանում են մեծ մասամբ այնպիսի բաներ, որ չարժէ թարգմանել, եւ այնպիսի մարդիկ, որոնց ոյժից վեր է մարդավարի թարգմանելը։

«Traduttore-tradiore («թարգմանիչները դաւաճան են»)—ասում է իտալական առածը։ Գուցէ ոչ ոքի այնքան սաղ չէ գալիս այդ առածը, որքան հայերէնից ռուսերէն թարգմանողներին, ի բաց չառած եւ պ.պ. Իւրիյ Վեսելովսկուն եւ Մ. Բերբերեանին, որոնք անկասկած վատ չեն թարգմանել, բայց լաւ բաների հետ թարգմանել են եւ թարգմանել են տուել այնպիսի թոյլ բաներ, այնպիսի անհամ գրուածքներ, որ, յամենայն դէպս, չարժէր ի ցոյց դնել։

Ինձ պատահել է տեսնել ռուսներ, որոնք հիասթափվել են հայկական գրականութիւնից, կարդալով «Армянскіе беллетристы» գիրքը, որի մէջ, պէտք է խոստովանել, կան վերին աստիճանի անշնորհք եւ ժանաւանդ, գեղարուեստի տեսակէտից, նաիվ կտորներ։ Բայց այդ դեռ ամբողջ վնասը չէ, որ հասցրել են մեզ, անկասկած ամենալաւ դիտաւորութիւններով, այդ գրքի հրատարակիչները։ Նրանք իրանց գրքով, մանաւանդ նրա երկրորդ հատորով, որ բարեբաղդաբար լոյս չը տեսաւ ամբողջապէս, երես տուին մեր գրական միջակութիւններին եւ հնարաւոր դարձրին այնպիսի երեւոյթ, որ ֆրանսիական «La Fronde» թերթում ինչ որ Julia Vlada «Մեծ գրողներ» (les grands écrivains) անուանեց Վ. Փափազեանին, Մուրացանին եւ այլն։

Քննադատական ճաշակի, չափի զգացմունքի եւ, կաւելցնենք, ազգային «թասիբի» պակասութիւն—ահա գծեր, որոնք յաճուկ են գրեթէ մեր բոլոր թարգմանիչներին։

Այդպիսի թարգմանիչներից է եւ պ. Ռ. Ամիրեան, որ, պէտք է ենթադրել, ոգեւորված է եղել ամենալաւ դրդումներով, երբ ձեռնարկել է թարգմանել պ. Ղ. Աղայեանի «Արեգնազանը»։

«Մօլա չեղած տեղը, աքլորն էլ մօլա է», ասում է առածը, եւ ով ուզում է հայ մանուկների ձեռքը տալ գրքեր, կարող է յանձնարարել եւ պ. Աղայեանի «Արեգնազանը» որ,—բացի իր ոտանաւոր մասի մի քանի հատուածներից, որոնք հրաշալի են,—ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամենամիջակ, շատ տեղ տափակ եւ հէքեաթի բնական համ ու հոտից զուրկ մի գրուածք։ Բայց հիւրասիրել նրանով ռուս ընթերցող հասարակութիւնը, որ առել է Պուշկինի, Կօտ-Մուռիկայի եւ ուրիշ այդպիսի գրողների հէքիաթների ճաշակը, այն էլ հիւրասիրել այնպիսի մի թարգմանութեամբ, որ անպէտք փոխադրութիւն է բազմաթիւ փոքրիկ կրճատումներով ու յաւելուածներով եւ բաւականաչափ սխալներով ու անթիւ փոփոխութիւններով, փոխադրութիւն, որի մէջ դուրս են գցված հէքիաթի աղը կազմող ամենալաւ ոտանաւոր հատուածներից շատերը,—այդ ամենաքիչը տարօրինակ բան է։

Որքան անճիշդ եւ անիմաստ է յաճախ թարգմանութիւնը՝ ընթերցողը կարող է դատել հետեւեալ երկու օրինակից.

—Ինձ թւում է, որ բարի Ոգիները կը պաշտպանեն մեզ, ասեց Արեգը...

—«Сомнѣваюсь, отвѣтилъ Арекъ, чтобы добрые духи помогли намъ» [стр. 32].

—Դու մեր Արեգն ես, այնպէս չէ՞, ասաց Նունուֆարը։

—Ի հարկէ, հոգիս, հապա ով պէտք է լինեմ, պատասխանեց Արեգը։

Գիշերվայ երգը

—

...Գիշերը սկսվեց։ Այժմ, աղբիւրի նման, ուզում է մէջիցս դուրս ցայտել իմ ցանկութիւնը,—եւ պահանջում է, որ ես խօսեմ։

Գիշերը սկսվեց։ Այժմ աւելի լսելի են խօսում բոլոր ցայտուն աղբիւրները։ Իմ հոգիս—չէ՞ որ նա էլ ցայտուն աղբիւր է։

Գիշերը սկսվեց։ Այժմ զարթնում են սիրահարների երգերը։ Չէ՞ որ իմ հոգին էլ երգ է սիրահարների»։

Այսպէս էր երգում Զրադաշտը։

Պարերգ

—

(Մի երեկոյ Զրադաշտը պատահում է անտառում պարող աղջիկների։ Աղջիկները կանգ են առնում։ Զրադաշտը ասում է.)

«Մի ընդհատէք պարերգ, սիրուն աղջիկներ։ Ձեզ ժամեցողը պարերի հակառակորդ չէ իր չար հայեացքով եւ ոչ էլ թշնամի աղջիկներին։

...Ես անտառ եմ, եւ իմ մէջ տիրում է մութ ծառերի գիշերը. բայց ով որ չը վախենայ իմ մթութիւնից, նա կը գտնի իմ նոճիների տակ եւ վարդի թփեր։ Կը գտնի եւ աղջիկներին սիրելի փոքրիկ աստուծուն (Կուպիդոնին, սիրոյ աստուծուն)։

(Զրադաշտը երգում է պարերգ եւ նրանք պարում են)։

Դաժբանական երգ

—

(Այս գլխում Նիցշէ կարծէք ուզում է ասել, թէ իր քարոզած կիսով չափ կենսուրախ եւ մարդասէր, կիսով չափ մռայլ եւ մարդատեաց աշխարհայեացքը չէ համապատասխանում իր էութեան, իր պատանեկութեան իդէալներին, որ մարդիկ սպանել են իր մէջ, բայց որոնք այնուամենայնիւ թանգ են իր համար։ Մեզ թւում է, թէ ճիշդ որ Նիցշէի վերջին տարիների քարոզած աշխարհայեացքը անցողական շրջանի աշխարհայեացք էր, այնպիսի շրջանի, որի ժամանակ Նիցշէի ոգին, գործ դնելով իր

—Ты нашъ, Арекъ, не такъ ли? говорила Нунуфаръ.

—Конечно, жизнь моя! Кѣмъ же я могу быть, какъ, не самимъ собою? отвѣтилъ Арекъ [стр. 48].

«Թարգմանիչները քաղաքակրթութեան պօստային ձիերն են», ասել է Պուշկին։

Մեզ թւում է, որ մենք շատ հեռու չենք գնայ այդպիսի ձիերով։

Տ. Ց.

—

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) «Ֆաուստ», ողբերգութիւն Գեօթէի, թարգմ. ընագրից բժ. Լևոն Տիգրանեան, 208 եր. գինը 2 ր. Երևան 1900 թ. 2) „Краткія свѣдѣнія о состояніи на Кавказѣ сельскаго хозяйства“ («Aperçu sur la production agricole du Caucase») 29 стр. Тифлисъ 1900 г. 3) «Отчетъ кавк. общества исправительныхъ колоній и пріютовъ «(за 1899 годъ), 63 стр. Тифлисъ 1900 г. 4) Уставъ того же общества; 5) «ქართული პრესა» («Քարթուլի պրէսա»—«Վրաց մամուլ») պ. Ժորդանիայի, արտատպած վրաց «Կվալի» շաբաթաթերթից. և 6) «მოკლე დარიგება ამერიკული ვაზის გაშენების შესახებ ქუთაისის გუბერნიაში» («Կարճ խրատ ամերիկական վազ տնկելու վերաբերմամբ) կազմեց Վ. Ստարոսելսկի, թարգմ. Ի. Անդրոնիկով։

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

Օգոստոսի 5-ին

*Ագուլիսում եւ իր շրջակայքում վերջացաւ բժժաքաղը։ Այս տարի առհասարակ բժժի բերքը աջող կարելի է համարել, իսկ գնի կողմից շատ բաւարար։ Թաց բժժը ծախվեց 16—18 ռուբլի։ Մի բան շատ աչքի էր ընկնում. առանց Թիֆլիսի շերամապահական կայարանի բանդէրոլի սերմերը աւելի աջող բերք տուին, քան բանդէրոլ կպցրածները։ Տեղական սերմնահանների սերմերից ամենից աջողը եղը. Ա. եւ Ս. Թադէոսեանցներին եւ եղբ. Լ. եւ Ց. Արասխանեանցներինն էր, որոնք չը տեսնված բերք էին տուել թէ Ագուլիսում, Օրդուբաթում, Ջուղայում, Նախիջեւանում եւ Վերին-Ազդան գիւղերում (եղբ. Թադէոսեանցներինը տես. «Մշակ» № 130)։ Ագուլիսում եղբ. Թադէոսեանցների սերմերից ստացվել է 33 ֆ. բժժ, իսկ մի քանի տեղերում 36—38 ֆ.։ Զարմանալի է, որ այսպիսի բարեխիղճ սերմ պատրաստողների շերամի սերմը շերամապահական կայարանը հիւանդ է ճանաչել։ Կայարանի բռնած այդ դիրքը դէպի բարեբեր սերմնահանները ստիպում է շատերին հեռանալ այդ գործից։ Նրանք չեն կարող առանց բանդէրոլի ծախել սերմերը, քանի որ պօլիցիան թոյլ չէ տալիս, իսկ բանդէրոլով նրանք չեն ցանկանում ծախել։ Բացի այդ, շերամապահները եւ սերմնահանները իրար հետ ուղղակի յարաբերութիւն չունեն, այլ մեծ դեր են կատարում «սերմ ծախողները» (զանազան չարչիներ, գործարանատէրեր եւ խանութպաններ), որոնց շատ ձեռնտու է բանդէրոլով սերմ ունենալը, որովհետեւ այդ բանդէրոլով նրանք լռեցնում են խեղճ գիւղացիներին եւ ստանում իրանց փողերը, առանց ուշք դարձնելու, որ սերմը փչացել է եւ արդիւնք չէ տուել։ Նոյն անել դրութեան մէջ են եւ տեղական սերմնահանները. նրանց բերանացի յայտնված է շերամապահական կայարանի կողմից այստեղ ուղարկված շերամապահից, որ կայարանը այս տարի եւս ընդունելու է սերմերի քննութիւնը, բայց հետեւեալ երեք պայմանով. 1) ներկայացնողը պէտք է խնդիր ներկայացնէ կայարանի կառավարչին, որ նա համաձայն է ենթարկվելու կայարանի բոլոր պայմաններին. 2) ներկայացրած սերմերի միմիայն տասը տոկոսն է քննվելու եւ 3) հիւանդ ընդունված սերմերը այրվելու են։ Ի՞նչ անի խեղճ սերմնահանը. եթէ չը ներկայացնէ, իրաւունք չի ունենայ ծախելու, իսկ եթէ ներկայացնէ, իր ամբողջ կարողութիւնը բաղդի բերմունքին է մնում, կայարանի ամենահասարակ ծառայողի մի սխալմունքի պատճառով, նա կարող է զրկվել իր ամբողջ կարողութիւնից։ Մի խօսքով, դրութիւնը շատ աննախանձելի է դարձել. նրանք չեն կարող գանգատվել, որովհետեւ դառը փորձը նրանց չափից դուրս վախկոտ է դարձրել։ Իմ կարծիքով, Գիւղատնտեսական ընկերութիւնը, որը այնքան գանդաղկոտութեամբ է առաջ տանում հսկողի հարցը եւ մինչեւ այժմ իր եզրակացութիւնը չէ ներկայացրել մինիստրութեանը, պէտք է այժմ (մինչեւ հոկտեմբեր ամիսը) օգնութեան գայ սերմնահաններին, խնդրամատոյց լինելով մինիստրութեանը, որ նա առժամանակ կարգադրէ թողնել կայարանին սերմ քննելը եւ պօլիցիային պատուիրէ, որ չարգելի ազատ սերմ վաճառելը մինչեւ այդ հարցի լուծումը։

Գիւղատնտեսական ընկերութիւնը միշտ աշխատել է պաշտպանել Կովկասի շահերը, այս հարցում եւս նա վստանված պէտք է տեսնի մի այնպիսի արդիւնագործութիւն, ինչպիսին է տեղական սերմնահանութիւնը, որի զարգացումը ամենք մի հասկացող անձնաւորութեան ցանկութիւնն է։ Զենք կարծում, որ երկրի շահերին համապատասխան լինի այն երեւոյթը, որ տեղական սերմնահանների թիւը պակասում է, (այս տարի մեզանում թողեցին այդ գործով պարապողներից հինգ անձինք) եւ աւելանում է միջնորդ չարչիների քանակութիւնը։

Կայարանի կարգադրութեան համաձայն եկաւ այստեղ շերամապահ, որպէս զի առաջ տանէ շերամապահութիւնը, որպիսի հեղնութիւն,—շերամապահութիւնը առաջ տանելու համար գալ յուլիսին, այն ժամանակ, երբ արդէն բոժժները քաղում են։

Օրդուբաթում կազմված ցուցահանդէսը չէ կարելի աջող համարել։ Մի քանի տասնեակ փունտ բժժ, մեր սովորական մրգերը, երկու ջուխտ ու մի կէնտ այցելու եւ ասեն բան լրիւ է, իսկ Ագուլիսից, բացի երկուսից, մնացածները մերժեցին մասնակցելուց։ Աւելորդ չէ յիշել, որ անցեալ տարի որոշվել էր ընտիր բժժի համար տալ պարգեւ Սառայ Տէր-Գրիգորեանցին մի խոշորացոյց, բայց նա ստացաւ բրօնզէ մեդալ։

Մ. Մ.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

Օգոստոսի 7-ին

Անցեալ նամակով ես ձեզ հաղորդեցի, որ մեզանում բերքը այս տարի առատ է։ Այժմ աւելորդ չի լինի խօսել այն պայմանների մասին, որոնց շնորհիւ մեր գիւղացին չէ կարողանում օգտվել այդ առատութիւնից իր դրութիւնը բարելաւելու համար։

Չը պէտք է մոռանալ, որ գիւղացին սերմացուն գնել է կրկնապատիկ եւ աւելի արժէքով, ցանել, մշակել, հնձել եւ կալսել է, եւ այսօր միջին թւով մէկին վեց կամ եօթ ստանալով, մէկ հինգերորդ մասը տալիս է վանքին, իսկ մնացած չորս հինգերորդը, հաշուելով այժմեան գներով, հազիւ միայն սերմացուի արժէքը եւ միւս ծախքերն է դուրս բերում։ Այսպիսի դէպքերում վանքը պէտք է օգնութեան հասնէր գիւղացուն եւ կամ վեցից մէկ տասանորդ վերցնէր, կամ սերմացուն դուրս գալով մնացածի մէկ հինգերորդ մասը տասանորդ հաշուէր, այն ինչ, բացի իր սովորական տասանորդը պահանջելուց՝ դարմանի նոյն չափով տասանորդ էլ է պահանջում. մինչդեռ եթէ գիւղացին ինքն է իր հաշուով կալսում կալը, մաքրում ցորենը եւ տասանորդը իր հաշուով կրում վանքի շտեմարանը, վանքը պէտք է դարմանի տասանորդ չը պահանջէ։ Պէտք է այն էլ ասել, որ այսպէս է միայն Վաղարշապատում, իսկ վանքապատկան միւս գիւղերում, որտեղ եթէ նոյն իսկ տասից մէկը տան վանքին, դարմանից էլ ոչինչ չը տան, վանքը կրկնապատիկ եւ եռապատիկ աւելի տասանորդ կը ստանայ, քան ստացել եւ ստանում է մինչեւ այժմ։

Որովհետեւ այս տարվայ ցորենի բերքը մեծ մասամբ վատ տեսակին է պատկանում եւ միանգամայն անյարմար է սերմացու գործածվելու, շատ լաւ կը լինէր, որ բոլոր վատ ցորեն ունեցողներին, առանց խտրութեան, վանքը ինքը սերմացու բաժանէր միայն, այն ինչ այժմ ահագին «զալմաղալ» է սերմացու ցորենի համար։ Գիւղացին մի կտոր արտ հասցնելով պատրաստել է իր համար սերմացու ցորեն եւ խնդրում է, որ այդ կալից տասանորդ չը վերցնվի, այլ նրա փոխարէն միւս կալերից վերցնվի, իսկ կալաչափ հայր սուրբը ոչինչ լսել չէ կամենում, եթէ խնդրողը խեղճ ու աղքատ է։ Եւ ինչ է անում մեր կալաչափ հայր սուրբը սերմացու ցորենի տասանորդը,—փոխանակ որպէս սերմացու առանձին ուղարկել տալու շտեմարան, խառնում է միջակ եւ վատ տեսակ ցորենների հետ եւ այդպէս ուղարկում շտեմարանը միաբանների համար հաց թխելու։ Սպիտակ հաց, մաքուր սենեակներ, հաստեղ կերակուրներ եւ հանգիստ կեանք, առանց շօշափելի գործունէութեան, ահա թէ ինչու համար են ապրում եւ բազմանում միաբանները։

Մի հանգամանք եւս, որ արժանի է ուշադրութեան, ցորենը կալերում չափվում է երկու տեսակ չափով մեծի անունն է թաժկերայ, որ պարունակում է 20 լիտր ցորեն, իսկ փոքրի անունը կոտ, որ պէտք է պարունակէ 4 լիտր ցորեն։ Հետեւելով կալաչափ հայր սուրբի շատ անգամ կրկնած խօսքերին եւ գիւղացիների կատարած փորձերին, կոտը չորս լտրից աւելի է, այսինքն հինգ կոտը, որ պէտք է հաւասար լինի մէկ թաժկերայի կամ քսան լտրի, պարունակում է 20 լտրից աւելի։ Այս զանազանութիւնը իմանալով հանդերձ մեր կալաչափ հայր սուրբը փոխանակ թաժկերայից-թաժկերայով, իսկ կոտից կոտով տասանորդ վերցնելու, ընդհակառակը թաժկերայի չափով եթէ գիւղացուց չորս կոտ տասանորդ պէտք է պահանջել, մէկ թաժկերայ ածում է երկրագործի մաս ցորենի վրա, իսկ այնտեղից չորս կոտ վերցնելով՝ ածում է տասանորդի վրա։ Դեռ զանազանութիւնը շատ չնչին է եւ հազիւ մի քանի ֆունտ աւելի գնայ վանքը, սակայն բացի հաւատը կորցնելուց, այժմեան պայմաններում խղճից դուրս է նոյն իսկ այդ ֆունտերը խլել քրտնաջան եւ անվաստակ երկրագործից։

Հրաւիրում ենք վանական կառավարութեան ուշադրութիւնը թէ գիւղացիների ձեռքից սերմացու չը խլելու եւ թէ ցորենի չափերը ուղղելու վրա։

Արիստ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, օգոստոսի 31-ին, երեկոյեան գնացքով Աղստաֆայից Թիֆլիս ժամանեց Վեհափառ Կաթողիկոսը։ Վանքի բակում ժողովվել էր

համեմատութիւնը, «գիշատիչ առիւծ» էր դարձել եւ միայն աղատութիւն էր փնտռում, բայց որից յետոյ նա պէտք է «անմեղ մանուկ» դառնար եւ քարոզէր «սուրբ այոն», այսինքն անմեղ, միամիտ, անգիտակից, անբռնազբօսիկ, կենսուրախ դրական բարոյականութիւն, որ չէր ճանաչի մի խումբ արտօնաւոր, իշխող գերմարդիկ եւ մի հօտ ստորադրեալ մարդկանց, այլ մի ամբողջութիւն, կազմված գերմարդիկներից, մի ամբողջ գերմարդկութիւն։ Շօպէնհաուէրի փիլիսոփայութեան ամպերը եւ միակողմանի դարվինականութեան ստուերը խաւարեցրին Նիցշէի աչքի առաջ ճշմարտութեան կենսատու արեգակը, որի արշալոյսը նշմարել էր նա իր պատանի հասակում։ Այդ խաւարումը դեռ բոլորովին չանցած՝ վրա հասաւ ուղեղի հիւանդութիւնը եւ այն, ինչ որ պէտք է ասէր աշխարհին Նիցշէ, մնաց «չարտայայտված»։

Վերցնում ենք այդ միտքը պարզաբանելու համար մի գեղեցիկ համեմատութիւն, որ առաջ է բերում «Русскія Вѣдомости»-ի աշխատակիցը մի քիչ ուրիշ նպատակով։ «Նիցշէի մօտիկ բարեկամների թւում կար մի ոմն դոկտոր Ր., որ սկզբում նոյն հայեացքներն ունէր, ինչ որ Նիցշէի ամբողջ շրջանը, բայց յետոյ փոխեց իր հայեացքները եւ վճռեց վարդապետ դառնալ։ Սակայն, չը նայելով իր հաստատ վճռին վարդապետ ձեռնադրվելու, Ր. շարունակ կրկնում էր, որ այնուհետեւ նրա կեանքի լաւագոյն մասը վերջացել է, որ այլ եւս չը կայ նրա համար երջանկութիւն. նա լալիս էր, ներողութիւն էր խնդրում բարեկամներից եւ չափազանց տխուր էր նրանցից անջատվելու ժամանակ։ Տխուր էր մանաւանդ հրաժեշտի ողջոյնը երկաթուղու կայարանում։ «Վերջին բօպէին,—պատմում է Նիցշէ,—նոյն իսկ սարսափ եկաւ վրա։ Կօնդուկտօրները կողպում էին վագոնների դռները, եւ Ր., ուզելով էլի մի քանի խօսք ասել մեզ, աշխատում էր բանալ իր բաժանմունքի պատուհանը, բայց պատուհանը տեղի չէր տալիս նրա սաստիկ ճիգերին։ Եւ այն ժամանակ, երբ Ր. այդպէս լալում էր բոլոր ոյժերը եւ ուժասպառ լինում, անաջող ճիգ թափելով ինչ որ մի բան յայտնել մեզ, գնացքը դանդաղ շարժվեց եւ մենք ստիպված էինք բաւականանալ նշաններով։ Այդ տեսարանի սարսուռ ազդող սիմվոլիզմը,—աւելացնում է Նիցշէ—չափազանց ցնցեց ինձ»։ Նոյն սիմվոլական պատկերը,—ասում է իր կողմից ռուս յօդուածագիրը,—ուրիշներին իր հայեացքները հաղորդելու ապարդիւն ջանքերի՝ լուսաբանում է եւ Նիցշէի գիտակցական կեանքը։ Նրա եւ ընթերցող հասարակութեան մէջ միշտ մնում էր մի խոչընդոտ, թերեւս նոյնքան փխրուն, որքան վագոնի ապակին, բայց եւ, եղած պայմաններում, նոյնքան անյաղթելի։ Իր գիտակցական կեանքի ընթացքում նա քիչ ժողովրդական էր. նրա բարձր հռչակը սկսվեց այն ժամանակ, երբ անբուժելի հոգեկան հիւանդութիւնը արդէն անդունդ էր փորել նրա եւ մարդկային աշխարհի մէջ»։

«Ո՜վ, պատանի հասակիս պատկերներ եւ երազներ։ Ո՜վ, սիրոյ վայրկեաններ, ատուածային վայրկեաններ։ Ի՞նչպէս չուտ մեռաք դուք ինձ համար։

Ձեզնից, իմ ամենաթանգագին մեռելներից, քաղցր բուրմունք է իջնում իմ վրա եւ սփոփում սիրտս արտասուքներով...

Եւ այնուամենայնիւ ես ամենքից հարուստ եմ եւ ամենից շատ եմ նախանձ շարժում դէպի ինձ, ես, ամենքից միայնակս։ Որովհետեւ դուք իմն էք եղել, իսկ ես մինչեւ այժմ էլ ձերն եմ...

Ախ, մենք ստեղծված էինք, որպէս զի միմեանցից մօտիկ լինէինք, դուք, քաղցր հեռաւոր հրաշքներ...

Այո, ինձ պէս, դուք էլ ստեղծված էիք հաւատարմութեան եւ յաւիտենութեան համար...

(Դուք չը փախաք ինձնից, ոչ էլ ես փախայ ձեզնից, այլ թշնամիներս սպանեցին ձեզ)։

...Բայց այսպէս կասեմ ես իմ թշնամիներին.—Ի՞նչ է մարդասպանութիւնը համեմատելով այն բանի հետ, որ դուք արեցիք ինձ։

...Դուք խլեցիք ինձնից այն, ինչ անդառնալի է...

Դուք սպանեցիք պատանեկութեանս երազները եւ ինձ համար ամենաթանգագին հրաշքները։ Երանելի ոգիներին, մանկութեանս բարեկամներին՝ խլեցիք դուք ինձնից։ Նրանց յիշատակին է նուիրված այս պսակը եւ այս անէծքը։

Ձեզ է այս անէծքը, իմ թշնամիներ։ Դուք կրճատեցիք ինձ համար յաւիտենութիւնը, այնպէս, ինչպէս խզվում է ձայնը ցուրտ գիշերներին...

Մի օր բարի ժամին ասաց ինձ իմ մաքրութիւնը. «Թող աստուածային լինեն ինձ համար բոլոր արարածները»։

Եւ ահա դուք յարձակվեցիք ինձ վրա կեղտոտ ուրուականներով. ախ, ուր չքացաւ այն ժամանակ այդ բարի ժամը։

«Թող բոլոր օրերը սուրբ լինեն ինձ համար»,—այսպէս էր ասում երբեմն իմ պատանեկութեան իմաստութիւնը,—յիրաւի զուարթ իմաստութեան խօսքեր էին այդ։

Բայց դուք, իմ թշնամիներ, խլեցիք ինձնից գիշերները եւ նրանց տեղ տուեցիք ինձ անքնութեան տանջանքներ. ախ, ուր կորաւ այն ժամանակ այդ զուարթ իմաստութիւնը։

Երբեմն ես ուխտել էի հրաժարվել ամեն մի զզուանքից,—եւ ահա դուք ժահրոտ պալարներ դարձրիք իմ մերձաւորներին։ Ա՜խ, ուր կորաւ այն ժամանակ այդ ազնիւ ուխտս։

Երբեմն, բոլոր կոյրերի նման, ես էլ գնում էի երջանիկ ճանապարհով, բայց ահա դուք ցեխ կիտեցիք կոյրի ճանապարհի վրա,—այժմ նա զզուանք է զգում դէպի կոյրերի նախկին ճանապարհը։

...Դուք թունաւորեցիք իմ ամենալաւ ժողովը եւ ամենալաւ ժողովներիս աշխատանքները։

...Մի օր ուզում էի ես պարել այնպէս, ինչպէս չէի պարել դեռ երբէք,—բոլոր երկինքներից բարձր էի ուզում ես պարել։ Եւ ահա դուք համոզեցիք իմ ամենասիրելի երգչին։

Եւ նա սկսեց նուագել մի սոսկալի, մի խուլ մեղեդի. ախ նա փչում էր իմ ականջների մէջ, իբր մի տխուր եղջիւր։

Մարդասպան երգիչ, չարակամութեան գործիք, դու ամենքից քիչ ես մեղաւոր։ Ես արդէն պատրաստ էի լաւագոյն պարի համար, երբ դուք հնչիւններով սպանեցիք իմ ոգեւորութիւնը։

Միայն պարի մէջ եմ կարողանում ես խօսել համեմատութիւններով վսեմ բաների մասին,—բայց այժմ իմ ամենավսեմ համեմատութիւնը մնաց չարտայայտված իմ մէջ։

Չարտայայտված եւ չը լուծված մնաց իմ մէջ իմ ամենավսեմ յոյսը։ Եւ մեռան ինձ համար պատանեկութեանս բոլոր պատկերները եւ բոլոր սփոփանքները։

Ի՞նչպէս կարողացայ ես տանել այդ բոլորը... Ի՞նչպէս յարութիւն առաւ հոգիս այդ գերեզմաններից։

Այո, իմ մէջ կայ մի բան, որ չէ կարելի ոչ վիրաւորել, ոչ թաղել, որ կարող է նոյն իսկ ժայռեր պայթեցնել,—իմ կամքս է այդ...

Ես անխոցելի եմ միայն այդ կէտում։ Դու դեռ կենդանի ես եւ հաւատարիմ ինքդ քեզ, դու, ամենահամբերող կամքս։ Շարունակ քանդել ես դու քո գերեզմանները։

Քո մէջ կենդանի է դեռ այն, որ անլուծելի է մնացել իմ պատանեկութիւնից. եւ յուսալից, ինչպէս կեանքը եւ պատանեկութիւնը, նստած ես դու այստեղ գերեզմանների դեղնած բեկորների վրա։

Այո, ինձ համար դու դեռ դաղաղներ կործանող ես։ Կեցցէ իմ կամքը։ Միայն այնտեղ են հնարաւոր վերածնութիւնները, ուր կան դաղաղներ։

Այսպէս էր երգում Զրադաշտը։

(Կը շարունակվի)

բազմութիւն, որն ողջունեց Վեհափառի գալուստը կեցցէներով։

—

Գերմանացի գիտնական Ֆինն, որի մասին մենք տուինք մի քանի տեղեկութիւններ, այցելեց Ներսէսեան դպրոցը։ Նրան հետաքրքրում էին դպրոցի մէջ ընդունված կարգերը եւ դասական առարկաները։ Նա փորձեց աշակերտների առողջութիւնը եւ եկաւ այն եզրակացութեան, որ հայ աշակերտները կարող են հեշտութեամբ իւրացնել եւրոպական լեզուների հնչիւնները։

—

Լրագիրների ասելով՝ «Ժողովրդական կայ Կարսում իգական պրոգիմնազիա բանալ. այդ բանի համար արդէն խնդրատուներ են եղել ժողովրդական լուսաւորութեան մինիստրին։

—

Ս. Պետերբուրգի հնագիտական ինստիտուտը մտնելու համար խնդիր են տուել մինչեւ այժմ 50 հոգի, որոնցից 20 այնպիսի անձինք, որոնք աւարտել են իրանց ուսման ընթացքը բարձրագոյն դպրոցներում։ Մնացած խնդրատուները, ըստ մեծի մասին, Պետերբուրգի համալսարանի եւ այլ բարձրագոյն դպրոցների ուսանողներ են, կան նաեւ հոգեւորականներ եւ զինուորականներ։ Խնդիրների ընդունելութիւնը կը տեւէ մինչեւ սեպտեմբերի 15-ը։ Դասախօսութիւնները կը սկսվեն սեպտեմբերի վերջերից կամ հոկտեմբերի սկզբից։

—

Շնորհիւ Հաբէշստանի ռուսաց դեսպանի աջակցութեան, Պետերբուրգի, Մոսկվայի եւ Օդեսայի առեւտրական տների ներկայացուցիչները որոշեցին ուղարկել իրանց գործակատարներին Հաբէշստանի զանազան քաղաքները, տալով նրանց ռուսաց ապրանքների նմուշներ այդ երկրում տարածելու համար։

—

«Русск. Вѣд.» լրագիրը հաղորդում է. «Օգոստոսի 25-ին, Մոսկվայում, Գրիգոր Զանչեանի մահվան քառասունքին, հայոց ս. Խաչ եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց։ Հոգեհանգստին ներկայ էին յայտնի բժշկապետ Ս. Պ. Բէլօգոլովայի այրին, Լազարեան ճեմարանի դիրեկտոր Միլլէր, տեսուչ Խալաթեանց, պրոֆէսորներ եւ ուսուցիչներ, «Русск. Вѣд.» լրագրի խմբագիր-հրատարակիչները, նոյն լրագրի աշխատակիցները, գրասենեակի եւ տպարանի ծառայողները, համալսարանի ուսանողները, որոնց արձակել էին հոգեհանգստի ժամանակ, Լազարեան ճեմարանի 8-դ դասարանի աշակերտները, հանգուցեալի ընկերները եւ Մոսկվայի հայոց կոլոնիայի անդամները։ Ցերեկվայ 2 ժամին հայոց գերեզմանատանը հանգուցեալի գերեզմանի վրա հայ քահանայ Պողովեանց հոգեհանգիստ կատարեց»։

—

Բանջարանոց պահողներին օգնելու նպատակով երկրագործական մինիստրութիւնը որոշել է բանալ էժան կրեդիտ, որպէս զի նրանք կարողանան մաքառել հարստահարողների ազդեցութեան դէմ։

—

Ոստիկանութեան կազմակերպութիւնը եւ պաշտօնեաների կազմը բարելաւելու նպատակով ներքին գործերի մինիստրութիւնը մշակում է բարեկարգութեան ծրագիր։ Ի միջի այլոց դիտաւորութիւն կայ ազատել քաղաքները այն ծախքերից, որ նրանք անում են ոստիկանութեան վրա։

—

Սիբիրում կաթնատնտեսութիւնը արագութեամբ զարգանում եւ հետզհետէ մեծ չափեր է ընդունում. առանձնապէս ընդարձակվում է իւղագործութիւնը։ Ներկայ ժամանակում մեծ քանակութեամբ իւղ է ներմուծվում Սիբիրից դէպի եւրոպական Ռուսաստանի ներքին նահանգները, իսկ Պետերբուրգի եւ Ռիգայի վրայով նա արտահանվում է նաեւ արտասահման։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը, ի նկատի առնելով սիբիրական իւղի հետզհետէ աւելացող պահանջը, վերջին օրերում կարգադրեց 100 սառցարան-վագոններ եւս աւելացնել նախկին 50-ի վրա այդ իւղի տեղափոխութեան համար։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, որ կադետների կորպուսների համար մշակված են ուսման նոր ծրագիրներ, որոնք մօտ օրերումս կը ներկայացվեն զինուորական դպրոցների գլխաւոր վարչութեանը եւ հաստատվելուց յետոյ 1901 թուականից սկսած պարտաւորական կը համարվեն բոլոր կորպուսների համար։

—

Բնակարանների պետական հարկին վերաբերեալ կանոնները առաջիկայ յունվարի 1-ից գործադրվելու են Կովկասում, Ստեպնոյ գեներալ-նահանգապետութեան շրջաններում եւ Ստավրոպոլի, Տօբոլսկի, Տոմսկի, Իրկուտսկի եւ Ենիսէյսկի նահանգներում։

—

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ գրում են. «Հինգշաբթի, օգոստոսի 31-ին, հողին յանձնվեց այստեղի քահանայի որդու՝ Գարեգին Մեհրաբեանի մարմինը, որ խեղդվել է Ծալկայում որսորդութեան ժամանակ լճի մէջ։ Ինքն էր տեղիս թէ տիրացուն եւ թէ միակ կրթված երիտասարդը։ Մեռաւ 25 տարեկան ծաղիկ հասակում»։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Անմիջիթար է այստեղի բանջարանոց մշակողների (բոստանչիների) դրութիւնը։ Նրանք տարվայ մեծ մասը քաղաքային կշեռքի հրապարակի վրա համալութիւն են անում եւ միմիայն ամարային ամիսներում անլուր տոկոսով փող են վերցնում իրանց մաշադի եւ հաջի վաշխառուներից՝ դաշտային պարապմունքներով զբաղվելու համար։ Ստացած եկամուտի մի մասը ընտանիքի վրա ծախսելով, միւս մասով էլ վաշխառուի տոկոսները լրացնելով՝ բոստանչին կրկին համեստ շալակն է առնում եւ դիմում է քաղաքային շուկան։ Այդպիսի պայմաններում գողանալը բնական է, եւ քաղաքում պատահած գողութիւնների մեծ մասը դրանց ձեռքով է կատարվում։ Բոստանը քիչ ծախսեր չէ պահանջում. մէկ խալվար հողը՝ մշակի, սերմի աղբի, ջրի եւ հողավարձ (հողերը պատկանում են բէգերին) պահանջում է առնուազն 150—200 ր., փողի սովորական տոկոսն է 1 ռուբլուն ամսական 2—5 կոպ., որ անում է 24—60%։ Տոկոսով վերցնում են կանխիկ գրաւականով. —գրաւ են դնում պղնձէ անօթներ կամ գորգեղէն գործուածք—գորգ, կապերտ եւ այլն։ Ցաճախ պատահում է 100 ռուբլուն 3—4 ամիս ժամանակով 25—30 ր. վերադիր են դընում, կամ շատ անգամ անսպասելի կերպով փող է հարկաւորվում, այդպիսի դէպքերում ընդունված է 1 ռուբլուն օրական 1 կոպէկ տոկոս տալ, որ տարեկան անում է 360%. սարսափելի չէ։ Եթէ բոստանչու արդիւնաբերութիւնը վնասվում է, այն ժամանակ վաշխառուն տոկոս տոկոսի վրա բարդելով՝ նոտարական մուրհակ է ստանում եւ սկսում է իր անաքանդութիւնը...։ Էշ ակչի դասակարգի դրութիւնն էլ այդ կողմից ոչ պակաս աննախանձելի է։ Հետաքրքիր եւ զարմանալի է, որ այստեղի վաշխառու մի քանի մարդիկ բարի նախանձ են զարթեցրել մեր պատուաւոր վաճառականների մէջ եւ մի քանի հետեւողներ վաստակել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԱՑ ՍՈՒԼԹԱՆԻ 25-ԱՄԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Նորերումս Կ. Պոլսում մեծ հանդէսով եւ շքեղութեամբ տօնվեց Աբդուլ Համիդ II սուլթանի թագաւորութեան 25-ամեայ յօբելեանը։ Բոսֆորի գեղանկար ափերի վրա վաղուց չէր կատարվել այդպիսի արտասովոր եւ ուրախ հանդէս։ Երկար տարիների ընթացքում ոստիկանական բեժիմի տակ ընկճված ամբոխին թոյլ էր տուած այդ օրը մի փոքր ազատ շունչ քաշել, բացվել, ուրախանալ... Դարեւոր նախապաշարումների կապանքներով ամուր կաշկանդված թրքուհուն անգամ, սուլթանի յատուկ հրամանով, ազատութիւն էր տուած մասնակցելու նոյն իսկ գիշերային հանդէսներին։ Բնութեան գեղեցկութիւններով առանց այդ էլ զարդարված Պոլիսը արհեստական կերպով պճնվել ու տօնական հանդէսի կերպարանք էր առել։ Ամենայն կողմից հաւաքվել էին պատգամաւորներ շնորհաւորելու սուլթանի երկարատեւ թագաւորութեան յօբելեանը. շնորհաւորութեան էին եկել ոչ միայն աշխարհի հեռաւոր ծայրերից մահմեդականներ, այլ նաեւ քրիստոնեաներ եւրոպական զանազան ազգութիւնների կողմից։ Թիւրքիայի զանազան նահանգներից եկել էին ոչ միայն ներկայացուցիչներ ուղղափառ միւսլիմանների կողմից, այլ նաեւ ներկայացուցիչներ անհաւատ «գեաւուրների» կողմից։ Զանազան շէյխերին եւ ուլեմներին միացել էին պատրիարքները եւ եպիսկոպոսները։ Ամենքի նպատակը մի բան էր միայն—յօբելեանի առիթով շնորհակալութիւն յայտնել Ալլահի երկրային ստուերին, որ նա 25 տարի շարունակ, օր ու գիշեր ճգնել եւ աշխատել է կառավարել երկիրը խոհեմութեամբ եւ արդարութեամբ, աշխատել է երջանկացնել ժողովուրդը, հոգացել է նրա մասին, որպէս հայրն իր հարազատ որդիների մասին... եւ, շնորհաւորողների կարծիքով, սուլթանը հասել է իր նպատակին...

Համաձայն չէին շնորհաւորողների հետ միայն երիտասարդ Թիւրքիայի կուսակցութեան ներկայացուցիչները. նրանք յօբելեանի օրը կը պցրել էին կառավարչական հիմնարկութիւնների, մզկիթների, մինիստրների «կօնակների» եւ այլ մասնաւոր չինութիւնների պատերին թիւրքիայի տարօրինակ աշխարհագրական քարտէզը, որ կազմել էր, ինչպէս կարծում են, սուլթանի փեսայ Մահմադ-Դամատ փաշան եւ հրատարակել էր Լօնդօնում կամ Պարիզում։ Պէտք է ենթադրել, որ Թիւրքիայի ներկայ դրութեան այնպէս մօտ ծանօթ անձնաւորութիւն, որպիսին Մահմադ փաշան է, ճիշդ կազմած կը լինի քարտէզը։ Եւ յիրաւի, քարտէզը ներկայացնում է թիւրքական տիրապետութիւնները Աբդիլ-Համիդի գահակալութիւնից առաջ, իսկ այն երկիրները, որոնք խլված են Թիւրքիայից վերջին 25 տարվայ ընթացքում—իսկ դրանց տարածութիւնը հաւասար է այժմեան Թիւրքիայի տարածութեանը—ներկված են սեւ գոյնով եւ նրանց կենտրօնում, սեւ ֆօնի վրա, նկարված է մի կարմիր աստղ, որ թիւրքերէն կոչվում է «իլդիզ»։ Անատոլիական երկաթուղին նկարված է Մահմադի քարտէզի վրա առաջնաւոր գծերով եւ հասցրած է մինչեւ Բաղդադ, որ, տօպօգրաֆիական նշանների օգնութեամբ, ներկայացրած է, որպէս անյատակ անդունդ։ Ճանապարհի ամբողջ երկարութեան վրա տեսնվում են պրուսական սաղաւարտներ եւ Գերմանիայի պետական զինագրօշը։ Մեքքայի նախագծված երկաթուղին նկարված է, որպէս մարդկային կմախքների մի երկար գիծ, որ յիշեցնում է Աբդուլլահ-փաշայի անվերջ պատերազմները Հեջասի եւ Իեմէնի բնակիչների դէմ, որոնք ձգտում են թօթափել իրանց վրայից թիւրքական ատելի լուծը։ Թիւրքիայի բարեբեր դաշտերը նկարված են քարտէզի վրա, որպէս անմարդաբնակ անապատներ, որոնց վրա, այս եւ այն տեղում, ցրված են քաղաքներ եւ գիւղեր. այնպէս որ քարտէզի վրա նայողը ակամայ հարց է տալիս իրան. «Ի՞նչպէս են ապրում մարդիկ այստեղ եւ ինչով են կերակրվում»։

Այս քարտէզների երեւալը, ինչպէս հաղորդում է «С. П. Вѣд.» լրագրի թղթակիցը, չփոթեցրեց ոչ միայն ոստիկաններին, այլ նաեւ խաղաղ բնակիչներին, որոնց օր-օր ասելով քնացրել էին թիւրքական լրագիրները եւ որոնց քաղցր երգերի ազդեցութեան տակ ամբոխը մոռացել էր թիւրքական այժմեան միապետի 25-ամեայ թագաւորութեան իսկական հետեւանքները։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բուդապէշից հեռագրում են «Berliner Tageblatt»-ին, թէ իբր այն պետութիւնները, որոնք ստորագրել են Բերլինի դաշնագիրը, երկու շաբաթ առաջ միջնորդի դեր յանձն առան բոլգարօ-բումինական ընդհարման մէջ. բայց նրանց քայլերը ներգործութիւն չունեցան բոլգարական կառավարութեան վրա, որը չէ շտապում բաւարարութիւն տալու Բումինիային։ Այս պատճառով հաւանական է համարվում, որ պետութիւնները կը հրաժարվեն որ եւ է մասնակցութիւնից այդ գործում եւ կը թողնեն Բումինիային անձամբ բաւարարութիւն ստանալ Բոլգարիայից, նոյն իսկ այն դէպքում, եթէ հարկաւոր լինի դիմել զէնքի զօրութեան։

—Արտասահմանեան մամուլը մատնացոյց է անում այն հանգամանքը, որ Անգլիայի գործողութիւնները բօէրների վերաբերմամբ բոլորովին չեն համապատասխանում այն սկզբունքներին, որոնք բացատրված են Հաագայի կոնֆերենցիայի դաշնագրում եւ որին ստորագրել է ինքը Անգլիան։ Բօբերտսի հրատարակած յայտարարագրում ասված է. «Բոլոր բօէրները անգլիացիներից գրաւված նահանգներում, բացի նրանցից, որոնք երդուել են արդէն, պէտք է հաւաքվեն պատերազմական գերիներ եւ ենթարկվեն աքսորի։ Այն բոլոր չինութիւնները եւ ագարակները, որտեղ կը գտնվեն թշնամու սուրհանդակներ, պէտք է հաւաքվեն հողի հետ։ Բոլոր բօէրները պարտաւոր են անյապաղ իմաց տալ անգլիական զօրքերին՝ նրանց ագարակներում գտնվող թշնամու ներկայութեան մասին. հակառակ դէպքում նրանք կը մեղադրվեն, որպէս թշնամուն օգնողներ»։ Այն ինչ Հաագայի դաշնագիրներից մէկում բառացի ասված է հետեւեալը. «Արգելվում է որ եւ է ձեւով ստիպել գրաւած երկրի ազգաբնակութեանը՝ մասնակից լինել պատերազմական գործողութիւններին ընդդէմ իրանց սեփական երկրի (յօդ. XLIV)։ Արգելվում է որ եւ է ձեւով ստիպել գրաւած երկրի ազգաբնակութեանը, որ նա երդում տայ թշնամուն «(յօդ. XLV)։ «Ազգաբնակութիւնը չը պիտի ենթարկվի դրամական կամ այլ պատժի նրա առանձին անդամների այն գործողութիւնների պատճառով, որոնց համար նա չէ կարող պատասխանատու լինել»։ Այսպիսով—ասում են արտասահմանեան լրագիրները—Բօբերտսի յայտարարագրով խախտված են վերեւ յիշված բոլոր կանոնները։ Սրա հետ միասին յիշում են նոյնպէս, որ կօնֆերենցիայի ժամանակ Անգլիայի ներկայացուցիչը մինչեւ անգամ առաջարկեց չը պատժել այն բնակիչներին, որոնք կը կատարեն իրանց բարոյական պարտաւորութիւնները եւ բոլոր օրինական միջոցներով եռանդուն եւ հայրենասիրական դիմադրութիւն ցոյց կը տան ներս խուժող թշնամուն։

—«Рус. Вѣд.» հեռագրում են Պետերբուրգից օգոստոսի 26-ին, թէ լուրերին նայելով, Եապօնիան կամենում է առաջարկել դաշնակից պետութիւններին՝ հիմնել Պետերբուրգում միջազգային առանձին յանձնաժողով, որ որոշ մասնակցութիւն ունենայ չինական կայսրութեան կառավարութեան մէջ։ Ասում են, մի քանի պետութիւններ հաւակրանքով վերաբերվեցին այդ առաջարկութեանը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օսմ. համալսարանը. —Սուլթանին գահակալութեան 25-րդ տարեդարձին առթիւ հաստատուելիք համալսարանին ծրագրին տրամադրութեանց համաձայն, այդ հաստատութիւնը, որ կայս. Համալսարան պիտի կոչուի, պիտի բաղկանայ կրօնական բարձր ուսմանց, չափագիտական ու բնական գիտութեանց եւ գրականութեան ճիւղերէն։ Իրաւագիտական եւ բժշկական քաղաքային վարժարաններն ալ անոր ճիւղերը պիտի համարուին։ Կրօնագիտութեան ճիւղին շրջանը չորս տարի է, իսկ միւսներունը՝ երեք տարի։ Այդ երեք ճիւղերը տնօրէն մը պիտի ունենան եւ ճիւղերուն իւրաքանչիւրը օգնական տնօրէններ։ Ուսուցիչները՝ իւրաքանչիւրը իր ճիւղին համար՝ մասնագէտ պիտի ըլլան։ Ուսանողներու ընդունելութեան պայմաններն ալ սապէս որոշուած են։ Համալսարանին ո եւ է ճիւղը մտնել ուզողը 18 տարեկանէն վեր պէտք է ըլլայ. լաւ բարոյականի տէր ըլլալով հանդերձ, իբրեւ ոճրագործ կամ յանցաւոր դատապարտութիւն կրած ըլլալու չէ. նաեւ տարափոխիկ հիւանդութիւններէ զերծ պէտք է ըլլայ։ Միանգամայն Սուլթանիէ, առեւտրական, Տարիւշէֆգա եւ Կ. Պոլսոյ ու նահանգաց կենդրոններու երկրորդական վարժարաններէն վկայական պէտք է ունենայ եւ կամ այդ վարժարաններու շրջանաւարտներուն հաւասար ուսմունք ունենայ, ինչ որ քննութեամբ պէտք է հաստատուի։ Միայն կրօնագիտական ճիւղը ընդունուելիքները ի հարկին քննութեամբ կընդունուին։ Մեքքէ, իրաւագիտական ու քաղաքային բժշկական վարժարաններու եւ Վարժապետանոցի շրջանաւարտները առանց քննութեան կընդունուին համալսարանին ո եւ է ճիւղը, բայց ի հարկին մրցման քննութիւն կը կատարուի։ Ուսանողը պէտք է գրաւորապէս յայտնէ Կ. Պոլսոյ մէջ բնակած վայրը եւ այն անձը, որուն վարչութիւնը կարենայ դիմել ի հարկին։ Համալսարանը ամէն տարի ընդունուելիք ուսանողներուն թիւը կրօնագիտութեան ճիւղին համար՝ երեսունէն եւ միւս ճիւղերուն համար քսանըհինգականէն աւելի պէտք չէ ըլլայ։ Ուսանողներէն առաջին անգամ կէս օսմ. ոսկի պիտի առնուի կանխիկ իբրեւ մուտք եւ յետոյ ամէն երեք ամիս՝ արձանագրութիւնները նորոգելու առթիւ՝ քառորդ ոսկի։ Ուսմանց շրջանը աւարտողներու քննութիւնը բերանացի պիտի կատարուի. նաեւ գիտական կամ ուրիշ խնդիրներու վրա գրաւոր թէզ մը պատրաստել պիտի տրուի։ Վկայականը կրթական նախարարութիւնը պիտի տայ՝ օրինական երդումը կատարելէ ետքը։ Համալսարանական շրջանաւարտները իբրեւ ուսուցիչ պիտի կրնան պաշտօնավարել Սուլթանիէ, առեւտրական, Կ. Պոլսոյ ու գաւառներու երկրորդական վարժարաններուն եւ Վարժապետանոցին մէջ։

Համալսարանին ուսման ծրագիրը կրօնագիտական ճիւղին համար կը պարունակէ կրօնական գիրքերու մեկնութիւն, կրօնական իրաւագիտութիւն, իսլամական պատմութիւն եւ իսլամ նշանաւոր կրօնագէտներու գործերուն վրա տեղեկութիւններ։

Չափագիտական ու բնական գիտութեան ճիւղին մէջ պիտի աւանդուին՝ տիեզերագրութիւն (չափագիտական ու բնական), բարձրագոյն գրահաշիւ, վերլուծական երկրաչափութիւն, տարբերական եւ ամբողջական հաշիւ, բնական գիտութիւն եւ օդերեւութաբանութիւն, ոչ-գործարանաւոր եւ գործարանաւոր քիմիագիտութիւն, կենդանաբանութիւն (համառօտ մարդակազմութիւն եւ այլն), բուսաբանութիւն, հանքաբանութիւն եւ երկրաբանութիւն։

Գրականութեան ճիւղ՝ փիլիսոփայութիւն, հոգեբանութիւն, տրամաբանութիւն, բարոյագիտութիւն, օսմանեան, արաբական, պարսկական ու ֆրանսական գրականութիւն, օսմանեան ու ընդհանուր պատմութիւն եւ աշխարհագրութիւն, հնագիտութիւն եւ եզանակ ուսուցման ու դատաբարակութեան։

(«Արեւելք»)

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

31 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նոցա Կայսերական Մեծութիւնները Օգոստափառ որդիների հետ միասին օգոստոսի 29-ին մեկնեցին դէպի Սպալա։

ԼՕՆԴՕՆ. «Times»-ին հաղորդում են Շանղհայից, թէ Լի-Խունգ-Զանգ մի յիշատակագրով դիմեց գահին, եւ խնդրեց, որ արքունիքը վերադառնայ Պեկին։

Իբրեւ պատասխան Պեկինից զօրքերը հեռացնելու առաջարկութեանը՝ Եապոնիա յայտնեց, թէ հակառակ չէ թէ այդ եւ թէ պետութիւնների կոնցերտի կողմից առաջարկած միւս միջոցներին, եւ որովհետեւ նրա աշխարհագրական դիրքը հնարաւորութիւն է տալիս անյապաղ զինուորական միջոցներ ձեռք առնել, ուստի նա պատրաստ է աւելորդ զօրքերը յետ կոչել։

Պետերբուրգի չինական դեսպանը հեռագրեց Լի-Խունգ-Զանգին, թէ Ռուսաստանի առաջարկութիւնը Պեկինից զօրքերը հեռացնելու մասին արված է այն ենթադրութեամբ, որ Չինաստանը իր կողմից բաւարար երաշխաւորութիւն կը տայ արքունիքի անյապաղ Պեկին վերադառնալու մասին այն ժամանակ, երբ այնտեղից արդէն դուրս եկած կը լինեն միջազգային զօրքերը։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործակալութիւնը» հաղորդում է, թէ ֆրանսիական կառավարութիւնը հաւանութիւն տուեց ռուսաց առաջարկութեանը Պեկինից զօրքերը հեռացնելու մասին։ Ռուսական եւ ֆրանսիական կառավարութիւնները բոլորովին հաւանութիւն են իրար հետ այդ կէտում։ Պիշօն եւ Գիրս դեսպաններին, ինչպէս նաեւ Ֆրէյ եւ Լենեվիչ գեներալներին հրամանագրված է միջոցներ ձեռք առնել, որոնք անհրաժեշտ են Պեկինից Տեանձին տեղափոխվելու համար, հէնց որ հանգամանքները թոյլ տան։ Ըստ երեւոյթին, Միացեալ-Նահանգները, երեւի նաեւ Եապոնիան կը հետեւեն Ֆրանսիայի եւ Ռուսաստանի օրինակին։

ԼՕՆԴՕՆ. «Daily Mail»-ին հեռագրում են Շանգհայից, թէ դաշնակիցների կողմից ենթադրված արշաւանքը դէպի Պաօտինֆու յետաձգված է եղանակի վատութեան պատճառով։

«Daily Telergaph»-ին հեռագրում են Շանգհայից, թէ այն չինական զօրքերից, որոնք ուղարկված էին վերջին երեք ամիսների ընթացքում հարաւից դէպի հիւսիս՝ Պեկինի զօրքերին օգնելու համար, մնացել են միայն 13,000 մարդ։ Նրանք ուղարկվում են Շանսի այրի կայսրուհու մօտ։ Մնացեալները ցրվել եւ այս ու այն կողմն են փախել։

ԼՕՐԵՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Կրիւգէր եկաւ Լօրէնցօ-Մարկեզէ։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Մինիստր-նախագահ Բոտրէմ արձավվեց պաշտօնից։ Նրան յաջորդ նշանակված է ծովապետ Ֆրեդերիկ-Վիլհէլմ Ֆոն Օտտէր. ամբողջ կաբինետը մնում է նոյնը։

ՊԵԿԻՆ։ Պրինց Ցին տեսակցութիւն ունեցաւ Լորդ Գարտի հետ. հետեւանքը գաղտնի է պահվում։

ՏԵԱՆՁԻՆ։ Այրի կայսրուհին եւ կայսրը, ինչպէս հաղորդում է պրինց Ցին, գտնվում են կալզանում։

ՆԻՒ-ԵՕՐԿ. «Morld» լրագիրը որոշում է Տեխասում ուրագանից կոտորված զոհերի թիւը երեք հազարից մինչեւ տաս հազար մարդ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Խաղաղութեան բանակցութիւններ վարելու համար Լիխունգչանգի ստացած կայսերական ուկազի մէջ ասված է. «Լիխունգչանգ, լիազօր դեսպան, սրանով ստանում է կատարեալ իշխանութիւն բանակցութիւններ վարելու համար։ Նա պարտաւոր է բարեխղճաբար քննել ուշադրութիւն պահանջող բոլոր հարցերը, որովհետեւ այստեղից մենք հնարաւորութիւն չունենք հսկելու նրա գործողութիւնների վրա»։

ՏԵԱՆՁԻՆ։ Դաշնակից զօրքերը, 4000 մարդ, ճանապարհ ընկան Զիէնխաիտէն եւ Իտիլիէ, որտեղից «Մեծ բոռունցքը» սպառնում է Տեանձինի չրջանին։ Զօրքերը գնում են երկու զօրասիւնով, որպէս զի յարձակումն գործեն երկու քաղաքների վրա եւս։

ԼՕՆԴՕՆ. Բօբէրտս հաղորդում է Պրէտորիայից, որ Բուլլեր հասաւ Կլիպգատ։

ՇԱՆԳՀԱՑ։ Հիւսիսային Շանդունում «Մեծ բոռունցքը» միացաւ «Մեծ դանակի» ընկերութեան հետ։ Լուրերին նայելով, չինական կանոնաւոր զօրքերը ցզեանսուի միւսիսում պատերազմեցին «Մեծ բոռունցքի» հետ եւ ջարդվեցին։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բուլլեր Սպիցկոպի ճանապարհին գրաւեց մի թնդանօթ եւ մի քանի տօնն պաշարեցին։ Բօէրները լեռնային զառիվայրից վայր գլորեցին ծանր թնդանօթները, միքանի տօնն ռազմամթերք եւ 13 սայլեր, որպէս զի նրանք չընկնեն անգլիացիների ձեռքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Русскій Инвалидъ»-ը հաղորդում է, թէ «Дмитрій Донской» չոգենաւով դեսպան Գիրս իր ընտանիքի հետ միասին օգոստոսի 23-ին ճանապարհ ընկաւ Տակուից եւ 26-ին հասաւ Նագասակի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։		№ 3 գնացքը։	
Բաղուից դուրս է գալիս ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »
№ 6 գնացքը։		**№ 4 գնացքը.**	
Բաթումից դուրս է գալիս առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	7 » 18 »	»	10 » 05 »
Բաղու է հասնում ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ.	19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 »	41 »
Բաթումից դուրս է գալիս. . . .	գիշ.	11 »	18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 »	30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	9 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է . . .	առ.	7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 »	29 »
Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս .	երեկ.	8 »	35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պroտասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկոր դի եւ կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Ֆ. Պroտասեվիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վներ. և մորթու հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ե. Առվանիսակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Վիէննայում լոյս տեսաւ
„ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ
ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ“
I մաս
Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կտրիճի պատկերով։
Գինը 1 ր. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 ս.
(Ճանապարհածախքով 1 ր. 75 կ. կամ 4 ֆր.)
Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ. Центральная книжная торговля, իսկ արտասահմանից՝ Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII/2, Mechitharistengasse 4.
(ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՍԱԿԱՒԱԹԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ)
(Հ. Հ.) 6—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ այս տարվայ սեպտեմբերի 9-ին նրա դիւանատան մէջ, ցերեկվայ ժամի — 1-ին տեղի կունենայ աճուրդ՝ կապալով տալու 12,000 պուդ սպիտակ նաւթի մատակարարումը քաղաքը լուսաւորելու համար,
Պայմանները կարելի է տեսնել վարչութեան 4-րդ բաժանմունքում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւ 3-ը ճաշից յետոյ։ 1—3

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Ս. Պետերբուրգի Ֆրեօբելեան կուրսերը աւարտած
Վ. Ս. ՀՄՇԿԵԱՆԻ
Երեխաների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 26-ից, ուսումը—սեպտեմբերի 1-ից։ Արբինինի փողոց, տուն № 4. Архивный переулокъ [продолженіе Католической] домъ № 4։ 3—3

Բժիշկ Գ. Մեհրաբեան
վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ ատամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4. [Велеяминовская ул. № 4, домъ Карташянъ]. 1—25

ՄԻ ԳԵՐԴԱՍՏԱՆՈՒՄ,
որի բոլոր որդիքը սովորում են զանազան գիմնազիաներում, ձեռնտու պայմաններով ընդունում են միջնակարգ ուսումնարանների փոքրահասակ աշակերտներ, ինչպէս нахлѣбники. Տան յարմարութիւնը եւ օդի մաքրութիւնը անգնահատելի են։ Տանը կից է եւ այգի։ Михайловская ул, д. № 129. հարցնել Բ. Պիճիկեանցին։ 1—2

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ԲԱԳԻՈՒՄ
Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում օրիորդաց եւ տղայոց գիմնազիայի, բէալական դպրոցի եւ այլ ուսումնարանների համար։
Մանկական պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէբելեան սիստեմով։ Ընդունվում են գիշերօթիկ եւ կիսագիշերօթիկ երեխաներ։ Մանկական պարտէզի եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կարելի է ստանալ օգոստոսի 20-ից, Բագումում։ 8—9

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲԺ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԿԱՃԿԱՃԵԱՆ
ընդունում է հիւանդներ օգոստոսի 17-ից Եչեւանեան հրապարակ, Роиновъ-ի լուսանկարչական գործարանի տակը։ 6—25

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
Ընկերութեան արհեստանոցում ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 27-ից։ Արհեստանոցին կից բացվում է եւ լուսցարան, որտեղ ցանկացողները կարող են սովորել հարթուկել եւ օսլայել սպիտակեղէն եւ զանազան նուրբ գործուածքներ։ Լուսցարանում ընդունելութիւնը տեղի կունենայ նոյնպէս օգոստոսի 27-ից։ 3—10

Նոր բացված
ԴՊՐՈՑ
ԿԱՐ. ՈՒ ՁԵՒԻ
Մ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
Աշակերտուհիների ընդունելութիւն սեպտեմբերի 1-ից ամեն առաւօտ ժամի 10—12։ Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 11-ից։ Սօլօլակ, Լերմօնտովսկայա (նախկին Նագորնայա)։ № 27, տ. Շամխարեանի։ 1—5

Մ. ՄՈՒՐՏԱԳ
վերսկսեց անգլիական լեզուի դասերը. երաշխաւորում է արտասանութեան կանոնաւորութիւնը. նշանաւոր զիջումն է անում մի քանի աշակերտներին միասին—իր բնակարանում։ Մադատովսկայա փ. № 4. 1—6

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ
ԶԵՌՆՏՈՒ ՊԱՑՄԱՆՆԵՐՈՎ
գիշերօթիկ աշակերտներ
Ներսիսեան, քաղաքային եւ ծխական դպրոցներից, որոնց հետ պարապում եմ եւ կրկնողութեամբ։ Հարցնել՝ Ներսիսեան դպրոց, Դաւիթ Տէր-Դաւթեանին։ 2—6

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
որ գիտէ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուները եւ մուզիկա՝ ցանկանում է գտնել կօմպանիօնկայի տեղ, կամ պարապել եօթ-ութ տարեկան աղջկայ հետ Թիֆլիսից դուրս։
Հասցէն՝ С. Нишанская ул. № 3. д. Захарбекввa, кв. Матиновой. 3—4

ԴՊՐՈՑ
ԵՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(ԾՆՆԴ. ԳՈՎՀԱՆՋԱՆԵԱՆ)
Ընդունվում են տղայք եւ օրիորդներ եւ պատրաստվում գիմնազիան, բէալական, վաճառականական եւ այլ միջնակարգ դպրոցներ մտնելու համար։ Ընդունելութիւնը օգոստոսի 22-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից։
Մանկական պարտիզում ընդունվում են 4 տարեկանից։
Садовая [Бебутовская], домъ Шадинова, № 38. 5—10

8—26

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են պետական դպրոցների համար կազմած հայոց կրօնի դասագրքեր՝ Եղնիկ ա. ք. Երզնկեանի աշխատասիրութեամբ.
I. Առաջին գրքոյկ, պատրաստականների համար. „ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ և ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ“։ Գ. տպագր.
Գինը 20 կոպէկ։
II. Երկրորդ գրքոյկ, Առաջին դասարանի համար. „ՀԻՆ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ“։ (Նոր հրատարակութիւն)։ Գինը 30 կ.։ (Ե. Հ. Հ.) 4—10

ՎԻԼՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ
Գոլով. պրոսպ., առաջին գիմնազիայի հանդէպ, տ. Քաչուէթի ս. Գէորգ եկեղեցու
Աշնան համար ստացված են ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ Ֆորմէննից զգեստներ Կլասիքական գիմնազիայի, բէալական և առևտրական ուսումնարանների համար։
Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ
4—10

Дозволено цензурою, Тифлисъ. 31 Августа 1900 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.